

ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԽԱՐՉԵՎԻ ԱՅՑԸ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

Ս/թ. նոյեմբերի 12-ին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցի այցելեց ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնից գործերի խորհրդի նախագահ տիար Կոնստանտին Խարչևը, նույն հաստատության բաժնի վարիչ Սերգեյ Կուզնեցովի հետ միասին: Մեծարգո հյուրերին ուղեկցում էին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պարոն Ս. Վարդանյանը և նախագահի տեղակալ պարոն Ռ. Զարգարյանը:

Հարգարժան հյուրերին դիմավորեց և հյուրընկալեց Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանը:

Մեծարգո հյուրերը եղան նախ առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցում, և ապա սրբազան հայրը նրանց ուղեկցեց նորակառույց առաջնորդարանի շենք: Ընդունարանում Գարեգին սրբազանը հյուրերին պատմեց թեմի կրոնա-եկեղեցական կյանքի մասին: Նշեց այն կարևոր աշխատանքները, որ կատարվել են թեմում: Սրբազան հայրը մեծարգո հյուրերին ներկայացրեց նաև այն ծրագրերը, որոնք պիտի իրագործվեն առաջիկայում:

Վերջում սրբազան հայրը իր շնորհակալությունը հայտնեց հյուրերին՝ նրանց ուշադրության և հոգատարության համար առ Հայաստանյայց Եկեղեցին և հայ հավատացյալները: